Հայ-Ռուսական համալսարանում
գործող՝ Իրավագիտության թիվ
063 մասնագիտական խորհրդին

ԿԱՐԾԻՔ

Արփի Աշոտի Լազարյանի «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հաշվի առնելով ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի ընդունումը և, համապատասխանաբար, ազատազրկման ձևով պատժի կատարումը կարգավորող նորմատիվ իրավական այլ ակտերում իրականացված բազմաթիվ փոփոխություններն ու լրացումները՝ ողջունելի պետք է համարել նշված պատժատեսակի դատապարտված անձանց հետ վարվեցողության տեսական և գործնական հիմնախնդիրներին նվիրված ատենախոսական սույն աշխատության պատրաստումը:

Այդ առումով, նախ, հարկ է փաստել, որ քննարկվող հետազոտությունը վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար ոլորտներից մեկին՝ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի ապահովմանը, որն ուղղակիորեն բխում է միջազգային իրավունքի, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և այլ միջազգային կառույցների սահմանած սկզբունքներից:

Բացի դրանից, ազատազրկման ոլորտում միջազգային-իրավական չափորոշիչների լիարժեք կիրարկումը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ մարտահրավերների տիրույթում: Տվյալ հանգամանքը պայմանավորված է

ինչպես օրենսդրական և ինստիտուցիոնալ, այնպես էլ գործնական ու կիրառական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներով:

Կարևոր է ընդգծել նաև, որ ատենախոսական սույն հետազոտության շրջանակներում հեղինակը քննարկման առարկա է դարձրել բազմաթիվ թե՛ տեսական և թե՛ գործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներ և հիմնավորել դրանց հրատապ լուծման անհրաժեշտությունն ու կարևորությունը: Շարադրվածը, բնականաբար, վկայում է Արփի Լազարյանի ընտրած թեմայի և դրա շրջանակներում իրականացված հետազոտության արդիականության ու հրատապության մասին: Ավելին՝ դրա արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտահետազոտական ուսումնասիրությունների համար:

Միևնույն ժամանակ, գրախոսման ներկայացված սույն աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ: Մասնավորապես՝ այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ու նորմատիվ իրավական ակտերի ցանկից: Առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դրանում ներկայացված են նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների աշխատակիցների, ինչպես նաև քրեակատարողական տարբեր հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների շրջանում անցկացված հարցումների արդյունքներին վերաբերող հավելվածներ:

Ներածությունում հեղինակը շարադրել է ընտրված թեմայի արդիականությունը, ինչպես նաև ներկայացրել հետազոտության օբյեկտն ու առարկան, նշված թեմայի մշակվածության աստիճանը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները, տեսական, նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, կատարված ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլխում՝ «Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, հեղինակը

ներկայացնում է նշված չափորոշիչների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները և դրանց դասակարգման հիմնախնդիրները:

Ընդ որում, հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա՝ ատենախոսը տվյալ գլխի շրջանակներում կատարում է հետաքրքրարժան եզրակացություններ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

- Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ ասելով՝ հարկ է հասկանալ միջազգային մակարդակում ընդունված պարտադիր կամ խորհրդատվական բնույթ կրող տարբեր փաստաթղթերով սահմանված կանոններ, սկզբունքներ, ուղենիշներ, որոնք արտացոլում են անազատության մեջ պահվող անձանց իրավական վիճակին, ազատություններին, պահման պայմաններին վերաբերելի դրույթներ և ուղղված են քրեակատարողական քաղաքականության զարգացմանը:
- Գիտատեսական տեսանկյունից դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող ակտերն առավել նպատակահարմար է դասակարգել ընդհանուր (կամ ունիվերսալ) և հատուկ նշանակություն ունեցողների, իսկ գործնական կիրառման տեսանկյունից՝ պարտադիր և ոչ պարտադիր բնույթ կրողների:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը վերնագրված է «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ներպետական և միջազգային իրավակարգավորումները», հեղինակն անդրադարձել է ազատազրկում պատժատեսակը կարգավորող ներպետական իրավական ակտերի ընդհանուր բնութագրին, ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության կանոնակարգման հիմնական միջազգային ակտերին և դրանց առանձնահատկություններին, ինչպես նաև նշված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների՝ ներպետական օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում իմպլեմենտացման հիմնախնդիրներին:

Տվյալ գլխում կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ևս հեղինակը հանգել է ուշագրավ մի շարք եզրակացությունների: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել հետևյալները.

- Թեև վերջերս Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել քրեակատարողական ոլորտի քաղաքականության զարգացմանն ուղղված լուրջ փոփոխություններ, սակայն ներպետական իրավական դաշտում առնվազն առկա են ակտեր, որոնցով կարգավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք դուրս են դրանց կարգավորման առարկայի շրջանակից: Մինչդեռ այն նորմերը, որոնք ուղղակիորեն վերաբերում են դատապարտյալի իրավունքներին և պարտականություններին, պետք է նախատեսված լինեն բացառապես օրենսդրական ակտերով:
- Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողությունը կանոնակարգող միջազգային ակտերը հանդիսանում են միջազգային հանրության կողմից սահմանված ժողովրդավարական մոտեցումների և սկզբունքների՝ քրեակատարողական ոլորտում ներդրման և իրականացման ճանապարհային ուղենիշներ:
- Քրեակատարողական ծառայողների մասնագիտական դեֆորմացման մշտադիտարկման գործուն մեխանիզմներից կարող է հանդիսանալ, նախ, նրանց վերապատրաստման դասընթացներում այնպիսի մոդուլի ներառումը, որը կվերաբերի անձի հոգեբանությանը և մասնագիտական դեֆորմացմանը դիմակայելու կարողությունների զարգացմանը: Բացի դրանից՝ կարևորվում է քրեակատարողական ծառայողների համար հոգեբանի ծառայությունների ապահովումը, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանք կարողանան դիմել որակավորված մասնագետի կողմից ստանալ մասնագիտական աջակցություն, որը կնպաստի թե՛ ծառայողների հոգեբանական ամրապնդմանը, թե՛ նրանց կողմից իրականացվող աշխատանքի որակի բարձրացմանը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, հեղինակը մանրամասն քննարկել է անչափահաս, կին, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող և ապաստան

ստացած դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման հիմնախնդիրները:

Նշված գլխում կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հեղինակը նույնպես հանգել է մի շարք հետաքրքրարժան եզրակացությունների: Դրանց շարքում հատկապես ուշագրավ են հետևյալները.

- Թեև պետությունն օրենսդրական մակարդակում փորձել է լուծել ազատությունից զրկված անչափահասների կրթության իրավունքի պատշաճ իրականացումը, սակայն գործնականում առկա են մի շարք լրջագույն խնդիրներ՝ սկսած ուսուցիչների ներգրավվածության ապահովումից և վերջացրած այս կատեգորիայի անձանց համար հատուկ կրթական ծրագրերի մշակման անհրաժեշտությամբ:
- Ազատազրկված կանանց նկատմամբ վարվեցողության վերաբերյալ թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավական կարգավորումներն ու դրանց հիման վրա ձևավորված պրակտիկան կատարելագործման կարիք են զգում:
- Հաշմանդամություն ունեցող ազատազրկվածների պահման պայմանների բարելավման տեսանկյունից առավել թիրախային լուծման տարբերակ կլինի վերջիններիս համար առանձնացված մասնաշենքի կառուցումը, որը շինարարական չափորոշիչների առումով հարմարեցված կլինի նշված անձանց կարիքներին:
- Ազատազրկման դատապարտված օտարերկրյա քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք առավել խոցելի են, քանզի քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու օրվանից բախվում են հատկապես լեզվին չտիրապետելու խնդրին:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճշգրիտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի կապակցությամբ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ իրավաբանական լեզվով:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ ատենախոսության վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ և դիտողություններ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթ 3-ում և աշխատության 75-82 էջերում հեղինակը փորձ է կատարում հիմնավորել «բանտարկյալ» եզրույթը տեսության մեջ լայն և նեղ իմաստներով հասկանալու կարևորությունը, ինչպես նաև սահմանել դրանց հասկացությունները: Այդ առումով հստակ չի պարզաբանվում, թե ո՞րն է դրա տեսական և, հատկապես, գործնական նշանակությունը: Այսինքն՝ անհասկանալի է, թե նման հասկացությունների սահմանմամբ, այն էլ՝ տեսական մակարդակով, ի՞նչ խնդիրներ պետք է լուծվեն, որոնց լուծումն անհնար կամ շատ բարդ է առանց լայն և նեղ իմաստների առանձնացման: Բացի դրանից, լրացուցիչ պարզաբանում են պահանջում վիճահարույց այն դատողությունները, որ լայն իմաստով «բանտարկյալ» հասկացությունը ներառում է նաև այն անձանց, որոնց նկատմամբ կիրառվել են անվտանգության միջոցներ (էջ 78) կամ որոնք փորձաքննություն կատարելու համար տեղավորվել են բժշկական հաստատությունում (էջ 80):
2. Ատենախոսության ենթագլուխ 2.3.-ի շրջանակներում անդրադառնալով դատապարտյալների վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման աշխատանքների բովանդակությանը՝ հեղինակն արդարացիորեն նշում է, որ «... քրեակատարողական ոլորտի հետագա զարգացումը պետք է իրականացվի արդեն ոչ թե արարքակենտրոն մոտեցման համատեքստում, որն ըստ վիճակագրական տվյալների անարդյունավետ է, այլ անձնակենտրոն, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր դեպքում գնահատել կոնկրետ անձին, նրա կարիքները և ռիսկերը, իրականացնել վերասոցիալականացման թիրախային ծրագրեր, ըստ այդմ կրճատելով ռեցիդիվի հավանականությունը և հասարակություն վերադարձնել ձևավորված արժեքների նկատմամբ հարգալից վերաբերմունք ունեցող քաղաքացու» (էջ 88): Տվյալ դիրքորոշումն արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող դրույթ 7-ում: Միևնույն ժամանակ, սակայն, տվյալ մոտեցման արդյունավետությունն ապահովելու

տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ, որ պարզաբանվեր, թե ո՞վ, ի՞նչ չափանիշներով և եղանակներով պետք է գնահատի նշված անձին, նրա կարիքները և ռիսկերը, ինչպես նաև՝ թե ո՞ր դեպքերում և ինչպե՞ս դա կարող էր նպաստել կրկնահանցագործությունների կանխմանը:

3. Խնդրահարույց է թվում «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման կապակցությամբ ատենախոսության 95-րդ էջում հեղինակի արտահայտած դիրքորոշումն առ այն, որ բնակարանի քրեադատավարական հասկացությունը որևէ պարագայում չի կարող նույնացվել քրեակատարողական հիմնարկի ռեժիմային գոտում գտնվող ոչ մի տարածքի հետ: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 6-ի 1-ին մասի 56-րդ կետով նախատեսված իրավակարգավորմանը համապատասխան՝ այդպիսին կարող է հանդիսանալ, օրինակ՝ քրեակատարողական ծառայողի աշխատասենյակը:

Ինչ վերաբերում է համապատասխան ռեժիմային գոտում գտնվող խցին, կացարանին կամ տեսակցությունների սենյակին, որոնք, բնականաբար, քրեադատավարական իմաստով բնակարան չեն հանդիսանում, ապա դրանց պարագայում կարող է կիրառվել ոչ թե «ներքին դիտում», այլ բնակարան չհանդիսացող փակ տարածությունում իրականացվող «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը:

4. Պաշտպանության ներկայացվող դրույթ 10-ում և աշխատության 131-րդ էջում ատենախոսը խիստ վիճահարույց պնդում է կատարում առ այն, որ «Քրեակատարողական համակարգն իր ներկայիս զարգացման մակարդակում ի զորու չէ լուծել քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացի դատապարտյալների նկատմամբ նշանակվող պատժի առանցքային նպատակը՝ դատապարտված անձի վերասոցիալականացումը, քանի որ վերասոցիալականացման գլխավոր գործիքը՝ անձի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների համալիրն է, որը չափազանց բարդ է իրականացնել այն դեպքում, երբ անձը, ում հետ տարվում են աշխատանքներ, այլ մշակույթի և լեզվի կրող է: Հետևաբար՝ նրա հետ հաղորդակցվելու միջոցով համապատասխան աշխատանքներ իրականացնելը գրեթե անհնար է»:

Այդ առումով հետաքրքիր կլիներ իմանալ, թե հեղինակը նկարագրված խնդրի ի՞նչ լուծումներ է առաջարկում: Մինչդեռ աշխատանքում նման առաջարկություններ ներկայացված չեն:

Բացի դրանից, տվյալ հարցի կարգավորման առումով նպատակահարմար կլիներ, որ հեղինակը վիճակագրական ցուցանիշներ ներկայացներ Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական հիմնարկներում պահվող օտարերկրացիների քաղաքացիության և այս կամ այն լեզվին նրանց տիրապետելու վերաբերյալ: Բանն այն է, որ նման ցուցանիշները վերլուծելու պարագայում է միայն հնարավոր նշված խնդրի կարգավորումը:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արփի Աշոտի Լազարյանի՝ «Ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում

«Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ս.Առաքելյան**

Ս.Առաքելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի

աշխատակազմի ղեկավար **Ռ. Շահինյան**

23.05.2025 թ.